



14524  
10p

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ Տ.Տ. ՄԿՐՏՉԻ  
ՍՐԲՈՂՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Զերդ Վեհափառութիւն

14324

Իմ հօր՝ Քերոբէ Պատկանեանի, մահուանից յետոյ ինձ ժառանգութիւն է մնացել արժէքաւոր զբաղարան Հայոց լեզուի, գրականութեան և արևելքի պատմութեան վերաբերեալ: Իմ ծառայութիւնը և մասնաւոր պարապմունքները—լիճակագրութիւն, աշխարհագրութիւն և ժողովրդագրութիւն,—այն աստիճան կանում են իմ ոյժերը, որ հնար չունիմ պարապելու այն առարկաներով, որոնց իմ հայրը իւր ամբողջ կեանքը նուիրեց: Ես եկայ այն եկրակացութեան, որ այդ գրադարանը կարող է աւելի օգտակար լինել մասնագէտներին, քան թէ ինձ: Ի նկատի ունենալով այդ, որոշեցի գրադարանի մեծագոյն մասը ընծայաբերել էջմիածնի վանքի մատենագարանին, որը հայկական բանահիւսութեան գլխաւոր կեդրոնն է: Ես պարտաւորւում եմ կազմել նուիրուած գրքերի ցուցակը, որը խնդրում եմ տակել վանքի հրատարակութիւններից մէկում: Գրքերից և բրոշիւրներից բացի կցանկանայի նոյն մատենագարանին տալ իմ հանդուցեալ հօր թղթերի մի մասը, որը վերաբերում է նրա մասնագիտութեան: Միայն ով որ օգտուի նրանցից, կխնդրէի չմուանալ ծանօթութիւնների մէջ յիշել, թէ ինչ տեսակ տեղեկութիւններ է քաղել այդ աղքիւրից:


Բացի այդ, կխնդրէի Զերդ Վեհափառութիւնից ածել ի կատար հետեւեալը. 1, կարգադրել կապել այստեղ գրքերը և ուղարկել վանքի հաշուով. 2, նուիրած գրքերը դարսել առանձին պահարանում և պահպանել կրակից ապահով շինութեան մէջ. այդ պահարանի վրայ կախել իմ հօր պատկերը, որ ես կուղարկեմ էջմիածին, և 3. Դասաւորել թղթերը և կազմել նրանց ցուցակը:

Նախապէս իմ շնորհակալութիւնը յայտնելով Զերդ Վեհափառութեան իմ այս խնդիրքի կատարման համար, ես ի սրտէ կցանկանայի, որ իմ նուիրած գրքերը հայ սպահն այնքան օգուտ բերեն, որ չափով այդ գրքերից օգտուել է իմ հանդուցեալ հայրը:

Մատչելով ի համբոյր աջոյ Զերդ Վեհափառութեան, ակնածութեամբ մնամ խոնարհ որդի՝

Ս. Պատկանեաց

Ս. Պետրովուրգ  
1903 թ. 8. յունուարի



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵՍՆ Տ. Տ. ՄԿՐՅՉԻ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

## ԶԵՐԴ ՎԵհափառութիւն

Ալրդէն բաղդ եմ ունեցել Զեր անուանակոչութեան օրը հետագոյն հաղորդել, որ ես զնել եմ հանգուցեալ Աղէքսանդր Երիցեանի գրադարանը և ընծայաբերել եմ ս. Էջմիածնի մատենադարանին։ Սյու ընծայաբերութեամբ իմ լուման տալով Մայր Աթոռի պայծառութեան՝ ես ցանկացայ նախ ի յեշատակ իմ հանգուցեալ կնոջ մի բարի գործ անել, որի անուան նույնում եմ այդ գրադարանը, և ապա՝ որ հանգուցեալ հայ հնագէտի թանգագին գրադարանը պահպանուի անթերի կերպով Մայր Աթոռի մէջ, որպէս զի նըանից շարունակաբար օգտուին թէ վանքի միաբանները և թէ հայկական կեանքով հետաքրքրուող անձինք։

Վեհափառ Տէր, խնդրում եմ, համեցէք ընդունել իմ այդ ընծան, և ա) կարգադրել, որ նա ծառայէ իւր իսկական նպատակին. բ) հրամայել որ բոլոր գրքերի ցուցակը տպագրուի առանձին բրօշիւրով. գ) որ այդ ընծան ընդունուի իմ հանգուցեալ կնոջ՝ Մարիամ Յովհաննիսեան Աւան-Խւզբաշեանի անունով. դ) գրքերը պահել եմ ծախսով շինուելիք յատուկ պահարանների մէջ և իրաւունք տալ մատենադարանի Վարչութեանը միայն անհրաժեշտագոյն դէպքերում գիրք տեղափոխել այնտեղից. և ե) բոլոր գրքերի վերայ բացի մատենադարանի կնիքը զրոշմելուց՝ դնել և յատուկ կնիք հետևեալ մակագրութեամբ։ «Մատենադարան Ա. Երիցեանի, ընծայաբերեալ ի Դ. Աւան-Խւզբաշեան»։

Պատիւ ունիմ յայտնելու, որ ես օգտուելով հայր Մեսրոպ վարդապետի ներկայութիւնից քաղաքում՝ խնդրեցի նրան անձամբ թիֆլիսում ստանալ հանգուցեալի ժառանգներից մատենադարանը համեմատ ցուցակների և հասուցանել Մայր Աթոռ։

Ընդ սմին յայտնում եմ Զերդ Վեհափառութեան, որ ես լսելով թէ Մայր Աթոռում չկայ մատենադարանի համար յարմարաւոր շինութիւն՝ որուցի այդպիսի շինութեան համար տալ այժմէն իսկ հինդ հազար ըուբին։ Սյու գումարը դնում եմ Տէր Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանի տրամադրութեան տակ, որպէս զի նա օրհնութեամբ և հաճութեամբ Զերդ ս. Օծութեան վանքի պարիսպների սահմաններում, Զեր ցոյց տուած տեղը, հիմնարկէ մեր Մայր Աթոռի անուան պատուաբեր մի գրադարանի յատուկ շինութիւն։ Ես վըս-

տահ եմ և համոզուած, որ ի նպաստել հանդամանաց, եթէ ոչ այս՝ հետեւեալ 1904 թուականի լնթացքում կարող կը լինիմ շինութեան ամբողջ ծախքը, մինչև 15,000 ըուբի, մատակարարել։ Ներկայումս էլ խնդրում եմ իմ առաջարկած գումարը գործադրել հետևեալ եղանակով. ա) մասնագէտ ճարտարապետի յանձնել շինութեան համար յատակագիծ կաղմելը. բ) պատրաստել նշանակուած գումարի համեմատ նախանաշիւ լինելիք ։ ծախքերի. և գ) շինութիւնն ընդունել իբրև նույն յանուն Դաւիթ բէկ Աւան-Խւզբաշեանի։

Որդիական ակնածութեամբ համարձակում եմ հայցել Վեհափառութեանդ սուրբ օրհնութիւնը իմ զաւակների և իմ տան վերայ, մատչելով ի համրոյ սուրբ աջոյդ

Թաւիր բէկ Աւան-Խւզբաշեանց

5 Փետրուարի 1903 թ.  
ի Բագու.



Անհրաժեշտ համարեցինք տպագրել Դաւիթ բէկ  
Աւանեւզբանի և Ս. Պատկանեանի այս երկու գրութիւնները, որոնցով նոքա Մայր Աթոռի Մատենադառանին յայտնի ընծայաբերութիւն են կատարում: Դաւիթ բէկը մի խոշոր գումարով գնել է հանգուցեալ Աղեքսանդր Երիցեանի գրադարանը և ամբողջութեամբ նուիրել Մայր Աթոռիս, ի յիշատակ իւր հանգուցեալ կնոջ, և խոստացել է մաս մաս տալ տասն և հինգ հազար բուրլի վանքի մէջ մատենադարանի համար յատուկ շինութիւն շինելու, իսկ Ս. Պատկանեանը՝ պրովեսոր Ք. Պատկանեանի որդին, նուիրել է իւր հանգուցեալ հօր գրադարանի այն մասը, որ վերաբերում է հայոց լեզուի, գրականութեան և արևելքի պատմութեան: Հետմ էլ հանգուցեալի թղթերից հայկական բանահիւսութեան վերաբերեալ մասը: Երկու նուիրատուններն էլ մի քանի պայմաններ են աւաշարկելը շեշտելով յատկապէս, որ հոգ տարուի գրքերի անկորուստ պահպանութեան և բուն նպատակին ծառայելու համար: Դաւիթ բէկը գրում է: «Այդ ընծայաբերութեամբ իմ լուման տալով Մայր Աթոռի պարագանեան, ես ցանկացայ նախ՝ ի յիշատակ իմ հանգուցեալ կնոջ մի բարի գործ անել, և ապա՝ որ հանգուցեալ հայ հնագէտի թանգագին գրադարանը պահպանուի անթերի կերպով Մայր Աթոռի մէջ, որպէս զի նրանից շարունակաբար օդտուին թէ վանքի միաբանները և թէ հայկական կեանքով հետաքրքրուող անձինք»: Իսկ Ս. Պատկանեանը իւր գրութիւնը վերջացնում է հետևեալ գեղեցիկ խօսքերով: «Ես ի սրտէ կցանկանայի, որ իմ նուիրած գրքերը հայագին այնքան օգուտ բերեն, որքան այդ գրքերից օդտուել է իմ հանգուցեալ հայրը»:

Թէ մէկ և թէ միւս ընծայաբերութեան արժեքը կը բնակի է: Երկու հայ աշխատաւոր մարդկանց, գիտնական Ք. Պատկանեանի և աշխատասէր Աղ. Երիցեանի՝ գրքերը աէւբերի յիշողութեան հետ որդւոց որդի կպահուին անկորուստ և միւնոյն ժամանակ այդ ժողովածունները լրացնում և ձոխացնում են Մայր Աթոռի մատենադարանը: Յաճախակի

տեղի ունեցող հալածանքները, երկրի անապահովութիւնը և, այդպիսի կացութեան հետեանք՝ տղիտութիւնը, ամբողջ տասնութեց դար գոյութիւն ունեցող ս. Էջմիածնի մէջ շատ քիչ բան են թողել անկորուստ և անկողոպուտ: պահպանուածների մէջ էլ ամենաարժեկը աւոր և մեծ նշանակութիւն ունին ամենից աւելի մեր մատենադարանի ձեռագրերը: Այդ ձեռագրերը բացառապէս հայերէն են. միայն այս վերջին երեք չորս տարիները ձեռք բերուեցին մի քանի վրացերէն և աւելի շատ պարսկերէն ձեռագրերը: Թուի և հազուագիւտ օրինակների շտառութեամբ մեր ձեռագրատունը անպայման առաջինն է բոլոր նման ժողովածուններից, որից յետոյ կարելի է դասել հետեւալները. Վենետիկի, Երուսաղէմի, Վիեննայի, Պարիզի, Նոր-Զուղայի, Նոր-Նախիջևանի, Սանասարեան դպրոցի, Լազարեան ձեմարանի, Պետերբուրգի մի քանի գրադարանների, Բեռլինի, Կ. Պոլսի, Լոնդոնի, Միւնիսինի, Հռովմի, և Հայաստանի շատ վանքերի ժողովածունները: Մինչև օրս գեռ ևս բազմաթիւ օրինակներ զարդարում են մասնաւոր անձանց գրադարանները, որոնք ըլնական ընթացքով, սակաւ առ սակաւ, անցնում են հասարակական գրադարաններին:

Էջմիածնի ձեռագրերի թիւը հասնում է 3563, որին պէտք է կցել Խաչիկ վարդապետի ձեռքով մասնաւոր անձինքներից, կամ եկեղեցիներից ու վանքերից ժողովուած և վանքին նուիրուած 150 օրինակ հայերէն և մօտ 200 օրինակ պարսկերէն, տաճկերէն և արաբերէն ձեռագրեր: Շատ պարզ և հասկանալի է, որ, քանի Էջմիածնում ուսումնասիրութեան այդպիսի հարուստ պաշար կայ, զօրեղ պահանջ զգացուի օժանդակ նորագոյն ուսումնական մատենադարանի: Էջմիածնում այդ քանը պակասում է: Մապագիր գրքերը համարեա առանց բայառութեան, պատահական հաւաքածոյներ են՝ ըստ մեծի մասին մեռած միաբաններից մնացած կամ աննշան նուերներով ժողովուած, եղանակներն էլ միայն հայերէն լեզուով: օտարելեզուեան գրքերը այնքան քիչ են և աննշան, որ նըրանց մասին խօսելն իսկ աւելորդ է: Ճեմարանի մատենադարանը, որ անջատ է վանքից և գետեղուած է դպրոցա-

կան շինութեան մէջ, անհամեմատ աւելի հարուստ է ուսումնական գրքերով, մանաւանդ հայագիտութեան վերաբերեալ մասով։ Ճեմարանի փոփոխուող վարչութիւնները ժամանակ առ ժամանակ հոգ են տարել այդ մասին, բայց աւելի գործ է տեսել Մեծ. Կ. Եղեանը, որ ի յիշատակ Խզմիրեանի, Սանասարեան՝ նոցա տուած փողերով, և իւր հաշուով գնել և ճեմարան է ուղարկել բազմաթիւ հազուագիւտ և թանգագին գրքեր։ Ճեմարանը նուեր է ստացել նաև հանգուցեալ Գր. Զանշեանի գրադարանը։ Այդ ձեռով կազմուած մատենադարանները հարկաւ, չեն կարող միանգամայն բաւականութիւն տալ մասնագիտորէն պարապողներին, և ամեն մի հրատարակութիւն կատարելիս, կամ լուրջ ուսումնասիրուած յօդուածներ գրելիս ահագին դժուարութիւններ է զգացւում։ Այդ մեծ կարիքը ներկայում աւելի շօշափելի է, երբ վանքի մէջ գնալով շատանում է բարձր ուսում ստացած միաբանների թիւը, և լուրջ, ուսումնական աշխատութիւններ կատարելու ցանկութիւն ունեցողները շատ են։

Քաջածանօթ ճշմարտութիւն է, որ մարդս իւր շրջանի արտադրութիւնն է, որ շրջանը ահագին նշանակութիւն ունի նրա հոգեկան աշխարհի վրայ։ Ես միշտ զգացել եմ աշխատելու անյագ եռանդ եւրոպական մեծ կետրոններում եղած ժամանակ, իսկ մեր սիրելի հայրենիքը դեռ այնպիսի պայմաններում է, որ, եթէ չասեմ քնացնում և թմրեցնում է, անկասկած շատ և շատ նուազեցնում է անհատական եռանդը։ Նուրջ բոլոր դեռ հանգստութիւն է, կեանքի պայմանները և պահանջները դեռ շատ չեն բարդուել և անհատը շուտ է ենթարկում ընդհանուր թմրեցուցիչ հոսանքին։ Մինչդեռ եւրոպական կետրոններում հոգեկան աշխարհի մէջ այնպիսի շփումն է կատարուում, որ անկարելի է այդ շփումից չտաքանալ և չցնցուել։ Մի գրագրանից միւսն էք անցնում, մասնագէտ, իրենց առարկան և և մշակման նիւթ դարձրած խնդիրը փանատիկոսութեամբ անձնուեր անձանց հետ հանդիպումն որոնք առանձին ոգեւորութեամբ պատմում և բացատրում են իրենց ուսումնագանդարած խնդիրը, արդիւնք ձեզ հաղորդում։ վերջապէս

ներկայ էք լինում զանազան դասախոսութիւնների, կարգում էք նորանոր բրոշիւրներ, հասարակութեան մէջ տեղեկութիւններ ստանում կեանքի հրատապ խնդիրների մասին, և ի՞նչ զարմանք, որ այդպիսի բնական խթանները թողնում են խոր հետքեր, ցնցում ձեզ, նոր մոքեր տալիս, շարժում ձեր փառասիրութիւնը, աշխատելու, ուրիշներից յետ չմնալու տենչը։

Մեղնում այդ ամենը պակաս է եղել. մտաւոր հետաքրքրութիւն, մտաւոր շարժում մենք պիտի ստեղծենք արտաքին, քաղաքակիրթ աշխատհի օրինակին հետեւելով։ Հարկաւոր է ահագին աշխատանք, նախ՝ կոռուելու հակադիր ոյժերի գէմ ապա արթուն պահելու մարդուս բնածին, դէպի հանգստութիւն թեքուող տեմպերամենար, և վերջապէս ըստեղծելու այն շրջանը, որի կարիքն այնքան մեծ է։ Ես քանի անգամ ուղղակի մատեմաթիքական ճշտութեամբ հաշուել եմ։ այն գրաւոր աշխատութիւնը, որ վանքում կատարում եմ երեք ամսուայ ընթացքում նոյնը որ և է եւրոպական մեծ քաղաքում առ առաւելն կատարել եմ մի ամսուայ ընթացքում։ Մինչդեռ կարծես հակառակը պիտի տեղի ունենար. վանքում չկան մեծ քաղաքների կողմանակի բազմաթիւ և բազմատեսակ հրապոյները, վանքում ապրող վանականը կարող է աւելի ինքնակամ տնօրինել իւր ժամանակը, եթէ նա որ և է պաշտօն չունի. բայց, կրկնում ենք, հակառակ այդ արտաքին թուացող յարմարութեան, երբ բացակայում է շրջապատի մղիչ ոյժը, թուլանում է նաև անհատական ինքնագործունելութիւնը, արտաղրելու ոյժը։

Էջմիածնի մէջ, իրաւ է դանդաղ, բայց առանց կանգառնելու, և որ զիստաւորն է՝ առանց յետագիմելու, կատարուել և կատարուում են աշքի ընկնող քաղաքակրթական շարժման գործեր, մտաւոր յայտնի աշխատանք։ Նատ անգամ գործը չէ պակասել, այլ արածը ցոյց տալու, ի տես ամենքի հրապարակ զնելու շնորհը։ Միայն մի հանգամանք ուշագրաւ է. եղած աշխատանքի մեծագոյն մասը մասնաւոր ձեռներէցութեան արդիւնք լինելով, չի ունեցել լայն տարածում և շարունակութիւն։ Յ. Շահնաթունեան, Սարգիս

Հասան-ջալալեան, վ. Բաստամեան և լուսնի ընկերներ և շաբունակողներ չեն ունեցել. իւրաքանչիւրի սկսածը կարծես իրենով էլ վերջացել է և կամ սահմանափակուել: Այդ հանգամանքն է պատճառ, որ էջմիածինը մինչեւ օրս չի կարողացել մտաւոր կետրոն դառնալ, յայտնի շկոլա, յայտնի գրական կամ մտաւոր շարժում ստեղծել և այդպիսի շարժման դլուխ անցնել: Մեղադրել այդ բանի մէջ վանականութիւնը, հաղիւ թէ արդարացի լինէր. միայն սովորական դարձած նախադասութիւնների կրկնութիւն կլինէր, եթէ կամենայինք ընդունակ և կարող անձանց հալածանքով բացատրել մեր հաստատած փաստը: Աշխատող անձինք նոյն իսկ հալածման ըստէներում պատուաւոր դիրք, արժանափայել կացութիւն են ունեցել. նոքա լիուլի խրախուսուել և միսիթարուել են հայ ժողովրդից, նոցա անունը միշտ յարգանքով է յիշատակուել: Ճշմարտութիւնն այն է, որ այդպիսի մարդիկ քիչ են եղել և ժամանակի բարձր հոգեւոր իշխանութիւնը վարչական կարեւոր գործեր նոցա է յանձնել, հեռացնելով ուսումնական գործունէութիւնից, միջոց չտալով որ այդպիսիները իմ ակնարկած գիտական շարժումն առաջ բերեն:

Ես լաւ մտաքերում եմ ներսէս կաթուղիկոսի մի կոնդակը, որ նա ուղղել է կոմս Յովհաննէս Լազարեանին և որի մէջ նկարագրել է իւր անելանելի դրութիւնը բանիքուն միաբանների պակասութեան պատճառաւ: Նա այդպիսիներից յիշատակում է երեք հոգի: Բարսեղ արքեպիսկոպոս, տեղապահ հայրապետութեան, Մակար վարդապետ, վերջը կաթուղիկոս, և Յովհաննէս եպիսկոպոս Շահմաթունեան, — որոնցից իւրաքանչիւրին նա ստիպուած էր ծանրաբեռնել զանազան կարեւոր և պատասխանատու յանձնարարութիւններով և դարձեալ վարանման մէջ էր, որովհետեւ մարդիկ էին պակասում: Բնական է, որ Շահմաթունեանց և ուրիշները չեին կարող նուիրուել զուտ ուսումնական գործունէութեան, որ նոցա գրած ամեն մի աշխատանք միայն գործերից խլած ժամերի արգասիք պիտի լինէր:

Այժմ հանդամանքները փոխուել են, բարձրացել ե-

երկրի կուլտուրական ընդհանուր վիճակը, հայ ժողովուրդը տպահով և խաղաղ կեանք ունենալով, ընդլայնել է իւր մըտաւոր պաշարը, ուսման և գիտութեան մէջ գնալով յառաջաղիմել է: Այդ ընդհանուր բարւոքումը թողել է խորը հետքեր նաև էջմիածնի միաբանութեան մէջ. այժմ, ինչպէս նկատեցինք, բարձր ուսման տէր միաբանների թիւը մի տասնեւակից աւել է: Կան այնպիսի միաբաններ, որոնք բացառապէս նուիրուած են գրական-ուսումնական աշխատանքների, և պիտի հաստատապէս յուսալ, որ այդպիսի աշխատութիւնների արդիւնքը գնալով աւելի նկատելի կը գառնայ: Արդէն ժամանակ է, որ մեր ժողովուրդը, մանաւանդ նրա կրթուած մասը, թողնի իւր սովորական դարձած արհամարհողական վերաբերմունքը և արդարամտութիւն ունենայ տեսնելու այն, ինչ որ կատարւում է վանքի մէջ:

Նկատելով այս իրողութիւնը, յուսով ենք բարեմիտ ընթերցողի մէջ կասկած չի ծագիլ, թէ դրանով մենք էջմիածնի միաբանութիւնը գովել ենք կամենում: միայն խընդրում ենք, որ մեր ժողովրդի մատծող մասը փոքր ինչ հաւատ ունենայ դէպի էջմիածնի միաբանութիւնը և դադարի անտեղի և անվայել մեղադրանքներից ու անհիմն հալածանքներից: Էջմիածնում շատ բան չի կատարւում: շատ բարի գործ սպանում է իւր սաղմի մէջ, բարի ցանկութիւններ մնում են անիրագործելի, բացարձակ անարդարութիւն է, այդ ամենի մէջ չար գիտաւորութիւն նկատել, կամ տգիտութեան պտուղներ որոնել: Նըջապատի կուլտուրական ոյժերը գեռ խոր քնի մէջ են, շարժող խթանները պակասում են, և կարող ենք հաւատացնել, տեղի և անտեղի հայհոյանքը հաղիւ թէ որ և է օգուտ բերի: Յամենայն դէպս մի բան որոշ է: վանքի պատրաստուած ոյժերը աշխատում են և լրջօրէն մտածում են մտաւոր վերածնութեան մասին: Եւ այդպիսի յարմար գէպում հայ ժողովրդի միջից ի նըպաստ այդ ուղղութեան կարկառած ձեռքը անդնահատելի խրախոյս պիտի համարուի:

Դաւիթ բէկ Աւան-Խովաշեանի և Ա. Պատկանեանի-

ընծաները դալիս են դիւրութիւն տալու յատկապէս զուտ ուսումնական գործունէնութեան։ Հայ վանքերը միշտ ծառայել են ուսման, հոգեւոր կըթութեան, որի համար վանականը որոշ յարմարութիւն ունի։ Երբ մենք մինչեւ մի կամ երկու տարին էջմիածնի մէջ ուսումնական մատենադարանի համար յատուկ վայելուց շինութիւն կունենանք, երբ նրա դահլիճները կցնենք հայագիտութեան—լայն մտքով առած — մասնագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ ձեռնարկներով և գրքերով, այդպիսի մի հաստատութիւն նոր զարկ կտայ և մեծ չափերով կէշտացնէ մեր առելիքը։

Հանգուցեալ Երիցեանի գրադարանը, տեղաւորուած 14 մեծ արկղերի մէջ, արդէն փոխադրել ենք էջմիածնի։ Այդ գրքերը ինքս ստացայ Թիֆլիզում՝ մէկիկ մէկիկ ստուգելով հանգուցեալի ձեռքով կազմած և նրա մահուանից յետոյ իւր որդու ձեռքով լրացրած ցուցակներով։ Հարկ եմ համարում հրապարակով յայտնել, որ հանգուցեալի այրին, ինչ վերաբերում է ցուցակների մէջ նշանակուած համարներին, գրքերը պահպանել կը համարեա անկորուստ։ Հայելինի բաժնում չերևեցին 86, ռուսերէնի բաժնում 52 գիրք, միայն բոլորն էլ աննշան և անարժէք գրքեր։ Հետեւապէս եղածը պատահական կորուստ պիտի համարել, որի փոխարէն ցուցակում նշանակուած աւել համարներ շատ կային։ Ժամանակին, ինչպէս Դաւիթ բէկն է ինսդրել, առանձնապէս կտպուի ամբողջ գրադարանի ցուցակը, և հասարակութիւնը միջոց կունենայ ծանօթանալ բովանդակութեան հետ։ Աւելորդ չենք համարում այժմենից իսկ նկատել, որ գրադարանի արժեքի և նշանակութեան մասին տարածուած լուրերը անսպայման չափազանցութեան վրայ էին շիմնուած։ Այդ գրադարանը որոշ մասերով կըրացնի վանքի ունեցած ժողովածուն, և միայն այդքան նոյն իսկ կովկասագիտութեան մասը շատ թերի է։ Ժողովածուի դիմաւոր մասը դրասէր մարդու տարիների ընթացքում ձեռք ընկածի խնամքով պահպանելուն պիտի վերագրել։

Գրքերի համար ժամանակին պիտի յատուկ պահարան-

ներ շինուին, և որովհետեւ շատ մասը անկազմ են, պիտի գործածութիւնից առաջ կազմել տրուին։ բայց չկամենալով մինչեւ այդ գրքերը արկղերում փակած և անգործադրելի պահի, տեղաւորեցի մեր ունեցած հին պահարաններում, որպէս զի ուզողները կարողանան օգտուել։

Ինչ վերաբերում է մատենադարանի շինութեան, գեռ չենք ձեռնարկել, միայն այդ մասին կարեւոր ենք համարում ասել, որ շինութիւնը, ինչպէս և նույիրատուի ցանկութիւնն ու պահնջն է, կկառուցանուի ներկայ ժամանակի գըրադարանների յատակագծերի հետ ծանօթ և հմուտ ձարտարապետի ձեռքով գծած յատակագծով, իսկ շինութիւնը վերջանալուց յետոյ կտպագրուի մանրամասն հաշիւ։ Նորին Վեհափառութիւնը արգէն հաճել է որոշել շինութեան տեղը՝ միաբանական խցերի կետրոնում և բաւական մօտ ձեմարանին։ Վանքի արեւելեան ճակատը այժմ բռնում են տպարանը և Երեմիա եպիսկոպոսի շինած միաբանական բնակարանները։ այս վերջին շինութեան անկիւնից, տաճարի հիւսիսային կողմում գտնուած պարտիզի մէջ, կշինուի մատենադարանը, այնքան հեռու տաճարից, որքան արեւելեան երկու շինութիւնները։ Մի ճակատով կնայի դէպի Մասիս, միւսով դէպի Արագած լեառը։

Հանգուցեալ Ք.Պատկանեանի գրադարանը Պետերբուրգից գեռ չեռ չէ ստացուել, որը ըստ համաձայնութեան պիտի ուղարկուի ապրիլ ամսուայ ընթացքում։ Այդ ժողովածուն պրովեսորի մահուանից յետոյ մասսմբ պակասել է և իւր ամբողջութեամբ մեր ձեռքը չի անցնելու։ Պետերբուրգում եղած ժամանակ մասնաւոր աղբիւրից տեղեկացայ, որ Ա.Պատկանեանը ղիտաւորութիւն ունի իւր հօր մատենադարանը ընծանելու ս. էջմիածնին, միայն տատանւում է, համոզուած չինելով, որ գրքերը կպահպանուին անկորուստ։ Այդ կասկածութեան հիմքը կազմում էին այն անտեղի և չափազանցրած լուրերը, որ ի հաշիւ վանքի և վանականների շատ շատերը բաւական միամտաբար տարածում են մեր ժողովրդի մէջ։ Հեռու գտնուողները և մեր կեանքին անծանօթ մարդիկ հարկաւ աւելի մեծ հաւատ են ընծա


յում ձշմարտութեան տեղ ընդունելով անհիմ լուրերը:  
Ասել թէ Էջմիածնի մատենադարանից գրքեր չեն կորչում:  
սխալ կլինէր. մենք գիտենք որ Պարիզի Աղբային Մատենա-  
դարանից, ուր ասանեակ պահպաններ, գրադարանապետ-  
ներ կան, որտեղից տուն գիրք չի տրում: — մի քանի անդամ  
տեղի են ունեցել յայտնի կորուստներ. մենք, որ գրքեր ենք  
տալիս միաբաններին, ուսուցիչներին և աշակերտներին, չենք  
կարող հերքել, որ տեղի է ունենում մի կամ միւս գրքի կորուս-  
տը, բայց կարող ենք համարձակ ասել, իրրե լաւ ծանօթ էջ-  
միածնի ձեռագրատան հետ, որ տասնեակ տարիների ընթաց-  
քում այդտեղ ձեռագրեր միմիայն աւելացել են նորանոր  
ընծայաբերութիւններով: 1902 թ. մայիս ամսին ես կազ-  
մեցի Լաղարեան Ճեմարանի հայերէն ձեռագրերի ցուցակը.  
այնտեղ ես գտայ երկու ձեռագրիք գնուած Հ. Կնքենճեանի  
գրադարանից և նուիրուած Ճեմարանին. երկուսի վրայ էլ  
կար մեր մատենադարանի կնիքը: Այդ ցաւալի իրողու-  
թիւնը տեղի է ունեցել տասնեակ տարիներ առաջ, որ, կը-  
կնում ենք, ոչ մի հիմք չի տալիս շարունակել կասկածով վե-  
րաբերուել և ընդհանուր եղբակացութիւն հանել մեր մա-  
տենադարանի անխնամ պահպանութեան մասին:

Ս. Պատկանեանը յայտնի մասնագետ է Սիրիոի զանա-  
զան ցեղերի լեզուի և կեանքի. նրա այդ մասին գրած աշ-  
խատութիւնները տպել է Կայսերական գիտութեանց ձեմա-  
րանը. նա միևնոյն ժամանակ լաւ վիճակագրագետ է, բայց  
գժիքախտաբար հայերէն չգիտէ և շարունակել իւր հօր մաս-  
նագիտութիւնը չի կարող: Երբ նա համոզուեց, որ էջմիած-  
նի վանքումն էլ գրքեր խնամքով պահել և գնահատել գի-  
տեն, ուրախութեամբ համաձայնուեց իւր հօր գրքերը մեզ  
ուղարկել:

Վեհափառ Հայրապետը իւր սրբատառ կոնդակներով  
իւր գոհունակութիւնն է յայտնել և օրհնել նուիրատու-  
ներին. ես վերջացնելով իմ խօսքս, ի գիմաց էջմիածնի միա-  
բանութեան և յատկապէս նրա գրականութեամբ պարագող  
անդամների, կարող եմ վստահացնել Մեծարդոյ նուիրատու-  
ներին և որոնք կկամենան այդ ուղղութեամբ նոցա բարի

օրինակին հետեւել: որ էջմիածնում ստացուած գրքերը Խը-  
նամքով կպահպանուին և ի բարին կգործադրուին: Երբ մա-  
տենադարանի յատուկ շինութիւնը պատրաստ կլինի, այն  
ժամանակ մենք այնտեղ կմիացնենք վանքի գրքերը, ձեմա-  
րանի գրքերի մասնագիտական մասը, Երիցեանի և Պատ-  
կանեանի գրադարանները, և յուսով ենք, մեզ կյաջողուի  
կովկասի մէջ հայերէն և հայագիտառութեան գրքերի ամե-  
նալրիւ մատենադարանն ունենալ:

Մեսրոպ Վարդապետ



adquagm. p. 100



MAL014789

